

պառնացած կորստենէն ազատելու համար (Եսթ. Գ, 16): Նոյնպէս էր եւ Հայոց մէջ: Ս. Վրթանեսի ժամանակ երբ Մազքութք սկսան ասպատակել Հայաստանի վրայ, « առնուին պանս պանկ, կ'ըսէ Փաւստոս, եւ ինդրել յԱստուծոյ՝ զի փրկեսցէ զնոսա » (16): Վարդանանց ապրստամբութեան շրջանին եկեղեցին նոյնպէս պատուէր տուաւ՝ քաղոց ամբողջ ամիսը « պանօք եւ աղօթիւք » Աստուծոյ ապաւինիլ (Եղիշ. 67):

Կ'երեւի՝ թէ այսպիսի յանկարծական պահքեր կանխաւ կը ծանուցուէին եկեղեցեաց բեմերէն՝ եպիսկոպոսաց ու քանահայից բերանով (անդ): Այս պարագայն աւելի յստակ է Ս. Ներսեսի ընծայուած կանոնաց հետագայ յօդուածին մէջ. « Որք ի բեմի պանս քարոզեն, եւ ոք լուծանէ առանց մարմնական վտանգի, նզովեալ լիցի » (Ներս. Խ): Միանգամայն կը տեսնենք այս խօսքերէն՝ որ ժողովուրդն այս կարգի պահոց պարտականութիւնն այլոց չափ ծանր չէր համարեր:

Եւ որովհետեւ այդպիսի առթից մէջ կարելի չէր ամբողջ ժողովրդեան երկարատեւ պահեցողութիւնը, զի գործաւորը պիտի աշխատէր ու զինուորը կոուէր, ուս-